

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՍՏԱԺՈՐ-ԴԱՍԱԽՈՍԻ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Ք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համալսարանի ամբիոններում դասախոս-ստաժորի հաստիք սահմանվում է բացառիկ դեպքերում՝ ամբիոնը երիտասարդ գիտամանկավարժական կադրերով համալրելու և սերընդափոխությունը բնականոն կարգով իրականացնելու համար:

2. Դասախոս-ստաժորի աշխատանքի ընդունումը, նրա պարտականությունները և իրավունքները սահմանվում է սույն կանոնակարգով:

3. Ստաժորի հաստիք կարող են զբաղեցնել մինչև 35 տարեկան համապատասխան բարձրագույն կրթություն ունեցող դիպլոմավորված մասնագետներ, մագիստրատուրա ավարտածներ, ասպիրանտներ, ինչպես նաև տվյալ մասնագիտության գծով գիտական աստիճան ունեցող անձինք:

4. Ստաժորը աշխատանքի է ընդունվում ամբիոնում գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվելու համար, անհրաժեշտ որակական ցուցանիշներ դրսևորելուց հետո:

5. Ստաժորի հաստիքը համարվում է ամբիոնի լրացուցիչ հաստիք, որի թեկնածությունը ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի երաշխավորվածությամբ և հաստատվում է ռեկտորի հրամանով:

6. Ստաժորը աշխատանքը համակարգում է համապատասխան ամբիոնի վարիչը և համալսարանի շարունակական ուսուցման բաժինը:

7. Ստաժորի ամսական աշխատավարձը որոշվում է սահմանված կարգով, ոչ պակաս քան դասախոսին տրվող է, հաշվի առնելով գիտական աստիճանը:

ՍՏԱԺՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Ստաժոր-դասախոսը պարտավոր է.

8.1. Իր գործունեության ընթացքում ղեկավարվել սույն կանոնակարգով: Նրա վրա տարածվում են նաև դասախոսի բոլոր պարտականությունները:

8.2. Մահմանված ժամանակահատվածում իր ուսումնական գործընթացը կազմակերպել ուսումնական պլանին համապատասխան՝ մասնակցել բոլոր դասընթացներին և հանձնել նախատեսված ստուգաթղթերն ու քննությունները:

8.3. Դասախոսական, լաբորատոր գործնական պարապմունքներ, մանկավարժական հմտություն ձեռք բերելու համար, մասնակցել տվյալ առարկայի, դասավանդման մեծ փորձ ունեցող, դասախոսի դասախոսություններին և լաբորատոր պարապմունքներին:

8.4. Աշխատանքի ընթացքում ծանոթանա ամբիոնի ուսումնամեթոդական, գիտամեթոդական աշխատանքներին և ամբիոնում տարվող ուսումնական գործընթացներին:

9. Ստաժորը ուսման ընթացքում կարող է վարել շուրջ 100 ժամ ուսումնական ծանրաբեռնվածություն:

ՍՏԱԺՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

10. Ստաժոր-դասախոսը կարող է.

10.1. Օգտվել այն բոլոր իրավունքներից, որից օգտվում են դասախոսները:

10.2. Պահանջել, որպեսզի իր համար կազմակերպվող անհատական համակարգումը հանձնարարվի գիտամանկավարժական աշխատանքի փորձ ունեցող, հմուտ դասախոսների:

10.3. Ինքնուրույն աշխատանքի կատարման համար պահանջել հնարավոր պայմաննանհրաժեշտության դեպքում նաև համապատասխան նյութեր և սարքավորումներ:

10.4. Մասնակցել ամբիոնի, ֆակուլտետի և համալսարանի կողմից կազմակերպվող գիտագործնական միջոցառումներին (գիտաժողովներ, սեմինարներ և այլն):